

Ինչպես նշել ենք, 1981 թ. Հուլիսին Թեոդոսիայի երեքագիտական թանգարանի աշխատակցուհի Ե.Ս.Սյրարինան Հնագիտական պեղումներ կատարեց «Կարանտինի» Հայկական Հուշարձանների տարածքում (ս. Գրիգոր, Հայոց բերդ, ս.Հովհաննէս-Մկրտիչ): Մաքրման աշխատանքների ժամանակ Հայտնաբերվեց մի քանի լատիքար, որոնց լուսանկարները Հնագետն ուղարկեց մեզ՝ վերծանելու նպատակով: Ցավոք, դրանց մի մասի վրա մնացել էին եղծված տառաշարքերի հետքեր և հնարավոր է էր վերականգնել թեկուզև մեկ բառակապակցություն: Վերծանվում է միայն հետևյալը.

205. Խաչքար, գորշ ավաղաքարից, քանդակված է եղել Ս. Գրիգոր եկեղեցու ավաղանի հետին պատին: Ելնդավոր աստ.երով վրան փորագրված է 3 առղ.

ՅԻՏ Խ ԼՏՔՍ  
ՅՈՎԱՆԷՍԻՆ  
ՍԱՏԱՏԻՆ

ՅԻՏ[Ա.ՏԱ.Կ Է]ՍԲ ԵՇԱ.ԵՔՍ/ ՅՈՎԱ-  
ԵՆՍԻՆ/ ՍԱՏԱՏԻՆ:

**ՂՐԻՄԻ Ա.ԽԱ.2 ՎԱ.Ն.ԲԸ**

Ղրիմի Ա.Խաչ վանքը դարեր շարունակ եղել է ղրիմահայոց, ապա նաև Նոր Նախիջևանի ու Բեսարաբիայի հոգևոր և կրթամշակութային մեծահամրավ կենտրոնը: Վանական այս համալիրը գտնվում է այժմյան Սաարի Կրիմ քաղաքից շուրջ 4 կմ դեպի հարավ-արևելք, թավուտ անտառներով պատված լեռների գրկում, Սուգակ գնացող երրեմնի ընդհանուր ճանապարհի վրա:

Ուսումնասիրողները վկայակոչելով Ա.Նշան եկեղեցու թմրուկի քիվերի արձանագրությունների թվագրությունը, սխալմամբ կարծել են, թե Ա.Խաչը կառուցվել է 1338 թ.<sup>47</sup>:

Երանք յխուռն ընթերցել են երեսուն, որը և քաղաքացիական ճանաչում է ստացել գիտական ոլորտներում ընդհուպ մինչև դարիս 70-ական թվականների սկիզբը<sup>48</sup>: Ինչպես կեսնենք ստորև, Ա.Խաչի դմրեթակիր տաճարը կառուցվել է 1358 թվականին: Խորեն Ստեփանեն իր զրքույկում նշում է, որ ոռոսական սղրյուրներում այս հոգևոր կրթական օջախը կոչվել է նաև Ա. Գևորգ<sup>49</sup>: Մատենադարանի գիտական աշխատակից Ա.Լալաֆարյանը մեղ Հայտնեց, որ XIV դարի ճաշոցի ձեռագիրը հիշատակարաններից մեկում (N.7477, էջ 589ր, 490ա) Ա. Խաչը կոչված է նաև «Մողկան» մականունով:

Ա.Խաչ յղամամարտարապետական համալիրը բաղկացած է հետևյալ կառույցներից.  
1. Ա.Նշան եկեղեցի (1358)

47 Армянские древности Таврического полуострова. ЗООИД, 1877, N.10, с. 449. В.Д.Смирнов, Археологическая экскурсия в Крым летом 1896 г. ЗВОРАО, I 1887, с. 286-287. X. Кучук-Иоаннесов, Старинные армянские надписи..., „Древности Восточные“, Труды Восточной комиссии Московского археологического общества. II, вып. 3, М., 1903, с. 72. Г.Айвазовский, Армянские надписи, находящиеся на юге России. ЗООИД, 1867, т.VI, с. 330. А.Л. Якобсон, Армянская архитектура в Крыму, с.173-181. Е. Крикун, Архитектурные памятники Крыма, с. 21.

48 Г.М.Григорян, Новые данные..., с. 298.

49 Խ.Ստեփանն. Ղրիմի Ա.Խաչ վանքը, էջ 8

2. Գավիթ.
3. Երկհարկանի բնակելի շենք (Հյուրաատուն),
4. Սեղանատուն.
5. Մենասաան (վանականների 16 խցերը), 1694 թ.
6. Աղբյուրներ,
7. Ցանկապատ:

Բոլոր կառույցները մեծապես առժեղ են երկրորդ Համաշխարհային պատերազմի ժամանակ<sup>50</sup>:

Ս. Նշան եկեղեցին խաչաձև Հաակագծով եռանավ կառույց է, որի սրբաբան սուլաքարերով երկթեք ծածկը նստած է չորս կամարների վրա: Կենարոնում վեր է խոյանում 12 նիսա ունեցող գմբեթը՝ սրածայր վեղարով: Ունի երեք խորան. գլխավոր մուտքը արևմտյան կողմից է: Մեկ այլ գուռ. որ այժմ քտրով պատված է, հարավային մասից գուռս է եկել դեպի վանականների խցերը:

Ս. Նշանին արևմուտքից կցված է գավիթը, որի՝ գեպի եկեղեցի ասանդ գոտան ճակատին, վերուստ, քանդակված է գառ, կճղակի մեջ՝ գրոշակ, գլուխը շրջած մի կողմ: Համանման պատկեր կարելի է դիտել կիլիկյան հայկապան դրամների վրա<sup>51</sup>: Հմմտ. Լևոն Բ-ի (1198-1219), աղյուսակ 1, 1, 9, 17, Հեթում Ա-ի (1216-1270/ գրամները) ան՝ս „агнец и лабарум,“): Գավթի պատերին պահպանվել են սր՝ շարք արձանագրություններ ինչպես կրաքարե որմերին, այնպես էլ ձեփի վրա. հատակին կան անարձանագիր կամ միայն գավաղան փորագրված տապանաքարեր, որոնք պատաստված են մարմարից և դեղնավուն կրաքարից:

Գավթի գիմաց, արևմտյան կողմում կան երկու շինություններ, որոնցից մեկի (8,93x9,07 մ) մուտքը հարավարևելյան անկյունից է, մյուսը թաղսածածկ սեգանատունն է (6,82x7,90 մ), ուր կան նկուղահարկեր և գետնափոր սլահեսաներ<sup>52</sup>: Վանքն ունեցել է իր անասնաբուժերը, որոնցից մեկի պատին 1686 թ. փորագրվել է հիշատակագրություն<sup>53</sup>: Համակառույցի Հյուսիսային ցանապատը ավելի ուշ շրջանից է: Հեաագայում են վերանորոգվել նաև ղուլդ աղբյուրները, որոնցից մեկը պարաստվել է Մանուել վանահոր ժամանակ՝ 1836 թ. տիկին Մարիամ Աղաջանյանի միջոցներով (Տե՛ս արձ. 231): Դեպի Ս. Նաչ ղնացող այժմյան ճանապարհը նորոգվել է մի քանի անգամ: 1889-1890 թթ. խորեն ծ.վ. Ստեփանեի հորդորանքով մի խումբ հավաաացյալների, ընդ որում և աիկին Մ. Շաուրի նյութական օժանդակությամբ հարթեցվում և քարապատվում է այս ճանապարհը՝ Սուրխաթից ընդհուպ մինչև Ս. Նաչ: Ժրաջան վանահայր խորեն Սաեփանեն այդ նույն ժամանակ ղիմում է սիմֆերոպոլցի մեծահարուստ Պետրոս Թոփալյանին և անգավակ ամուսիններ Ղաղարոս և Մարիամ Բերրերյանցներին՝ խնդրելով վերանորոգել Ս. Նշան եկեղեցին և գնել սնհրսոծեշա կահ-կարասի (ան՝ս արձ. N. 235):

Ս. Նաչ վանքը եղել է լուսավորչագավան հայության հոգևոր- մշակութային կենտրոնը: Այդ է վկայում 1751թ. շնորարարական արձանագրությունը, որ ագուցված է գավթի արևմտյան մուտքի մոտ՝ աջից:

<sup>50</sup> А.Л. Якобсон, Средневековый Крым, с.116.


<sup>51</sup> С.А. Гамалов-Чураев, Классификация рубенидских монет. Труды нумизматической комиссии Российской академии истории материальной культуры. IV, Петербург, 1923, с. 5, табл. I, 10.

<sup>52</sup> ЗООИД. X 1877, էջ 449.

<sup>53</sup> Նույն տեղում, էջ 447:

Հուշարձանախմբի վիմադրերից շատերն այսօր գոյութիւն չունեն. գրանք պրակում ներկայացված են նոխորդ սւտումնասիրողների ընդօրինակութիւններով:

206. Ա. Նշան եկեղեցի. Գմրեթի թմբուկի քիվերին՝ խոշոր, դեղեցիկ ծաղկագրով շրջանաձև մեկ առղ ոտանավոր.



ՓԱՌԱՑ ՏԱՃԱՐՍ ԱԼՍՏՈՒԱԽԱՅԻՆ՝  
ՅԵՐԿՐԻ ԴՐԱԽՏ ԿԵՆԱՑ ՓԱՅՏԻՆ,  
ՈՐ Է ՊԱՏԿԵՐ ԵՐԿՆԻՑ ՎԵՐԻՆ  
ԵՒ ԵՌԱՆՁՆԵԱՆՆ ԿԱՅԱՆԻՆ.  
Ի ԾՆՆԴԵՆԷ ՄԱՐՄԵՆՈՎ ՓՐԿՁԻՆ  
ՅԵՐԵՔ ՀԱՐԻԻՐ ԵՒ ՀԱԶԱՐԻՆ  
ՅՈՒԹ ԵՒ ՅԻՍՈՒՆ ՍԿՍԵԱԼ ԱՄԻՆ  
(1358),  
ԿԱՆԳՆԵԱԼ ՅԱՆՈՒՆ ՍԲ ՆՇԱՆԻՆ,  
ՍԱՏԱՐՈՒԹԵԱՄԲ ԻՐ ԾԱՌԱՅԻՆ՝  
ՅՈՎՀԱՆՆԻՍԻ ԿՐԱԻՆԱԻՈՐԻՆ  
ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ԵՂԲԱՐՑ ՆՈՐԻՆ  
ԵՒ ԸՍՏ ՈԳԻՈՅ ՈՐԴԻՈՑ ԲՆԱԻԻՆ:

Ծանոթ. նախորդ հրատարակիչները վերծանել են յուր իւր երեսուն:

Մ.Բժշկյանը նշում է, թէ Ա.Խաչ վանքը կառուցել են Յովաննեսը և Գևորգը: Ինչպես տեսնում ենք, բնագրում Գևորգի անունը բացակայում է:

Հրատ. Բժշկյան, 324, Տեր-Աբրահամյան, Բ, 157, Խ. Ստեփանե, 4-5, Кучук-Иоаннесов, 40, Якобсон, 176, ЗООИД, VI, 325, X, 448, Григорян, Новые данные, 298, Ա.Սազումյան, Ա, Ենգոյան, Վիմագրական շակումներ, էջ 74:

Լուսանկ. 88

207. Մենասասունի հյուսիսային մուտքի ճակատակալ ղորշ ավաղաքարե սալին՝ ելնդավոր տառերով 5 առղ.

ԱՎՏԻՆԵՅԱՊԱՆՍՊԱՐՏԱՔԻՆ • ՎԻԳԵՆՅԻԿԻՅԵՏԻՎԵՐԻՆԵՆԵՐՔԻՆ  
ՀԱԶԱՐԿԱՐԻԻՐՔԱՊԱՍՈՒՆ ԹԻՒՆ ԸՆԴԵԵՐԻՆԻՓԱՌՍԵՒՎԱՅԵԱՐԲՈՅՆՀԱ  
ԿԻՆՏԻՆԱԴՈՎՅԻՆՏԱԿԱՍԵՏՈՒՐԶՈՂՈՐՄԻՆՅԱԿՈՒԴԻՏԱԿՊԵՏԻՆ


ԸՆԴԱՀԼՀԱՒՏԻՆՆԱԵՄԱՏԻԱՏՈ  
ՂԱՅՆՆՈԳՈՎՀԱՄԱՅՆԻՆ•

ԱՄՍՏՈՒՇՈՒԿ ՇԻՆԵՑԱԻ ՊԱՐԻՍՊՍ ԱՐՏԱՔԻՆ ԳԵՂԵՑԻԿ ԽՑԵՐՕՔ ՎԵՐԻՆ ԵՒ ՆԵՐ-  
ՔԻՆ/ ՀԱԶԱՐ ՀԱՐԻԻՐ ՔԱՌԱՍՈՒՆ ԹԻՒՆ ԸՆԴԵՐԵՔԻՆ (1694) Ի ՓԱՌՍ ԵՒ ՎԱՑԵԼ  
ՍՐԲՈՑ ՆՇԱՆԻՆ, ՏԻՆԱ ԴՈՒ ԶՅԻՇԱՏԱԿՍ ԵՒ ՏՈՒՐ ԶՈՂՈՐՄԻՆ ՑԱԿՈՒՐ ՊԻՏԱԿ ՊԵ-  
ՏԻՆ/ ԸՆԴԴԴՂԱՂԵԼ ՀԱԻԱՏԻՆ ՆԱԵԻ ԱՇԽԱՏՈՂԱՑՆ ՀՈԳՈՎ ՀԱՄԱՅՆԻՆ:

Հրատ. Մ. Բժշկյան, 325, Տեր-Աբրահամյան, Բ. 153.  
Ասեփանե, 8, Кучук-Иоаннесов, 41 Якобсон, 174.

Լուսանկ. 89

208. Գալթի բակում, մենաստանի հյուսիսային պատի մեջ (եկեղեցու արեմտյան  
մուտքի աջ կողմում, արտաքուստ) ազուցված մարմարակերտ հուշատախտակին՝ 12  
տող.



ողորտոթեամյալն ԱՅ ՎԵՐՍՏԻՆ ՆՈՐՈԳԵՑՄԱԻ ՍԲ ԽԱԶ ՎԱՆՔՍ/ ԳԵՂԵՑԿԱՅՕ-  
ՐԻՆԵԱԼ. ԹԷ ՏԱՃԱՐԵՆ ԵՒ ԹԷ ԱՐՏԱՔԻՆ ՍՐԱՀՔԸ ՊԱՐԸՍ/ՊԱԻՆ ՊԱՐԱԳԱՅԻՒՔ. ՈՐ  
Է ԱԹՈՒ ԲՈԼՈՐ ԿՂՁՈՑՍ ԼԼՈՒՅՍԱՒԼՈՂՁԱԴԱՎԱՆ ԱԶ/ԳԻՍ. ԱՅՍԻՆՔԵՆ՝ ԿԱՑԱ-  
ՅՈՒ, ՂԱՐԱՍՈՒՅՈՒ, ՊԱՂՁԱՍԱՐԱՅՈՒ, ԿԵՕՁԼԷՎԷՅՈՒ ԲՈԼՈՐ ԳԻՒՂՕՐԷՒՒՔԸ Է-  
ԼԱՅԵԴԵՂՁ ՂԱԻՇԱՆԱԻՆ. ԸՆԴ ՆՄԻՆ ՈՒՌՈՒՄԵԼԵԱԻՆ. ՈՐՔ ԵՂԵՆ/ ՁԵՌՆՏՈՒ  
ԲԱՐԵՊԱՇՏՕՐԷՆ ՋԵՐՄԵՌԱՆԴ ՍԻՐՈՎ. ԱՐՔ ԵՒ ԿԱՆԱՅՔ ՈՂՈՐ/ՄՈՒԹԵԱՄԻ Ի  
ԺԱՄԱՆԱԿՆ ԱՌԼԱՂՁՆԼՈՂԴՈՒԹԵԱՅԵ ՅԱԴԱՄԱՅ ԱՐՔԵՊԼԻՅԱԼՈՂՈՂՈՍԼԻ  
ԿՂՁՈՑՍ (ՈՐ ԷՐ ԱՇԼԱՅԵԼԵՂՏ ՅԼՈՂՂԱՅԵՆՈՒ ՊԼԱՅՏՐԻԱՐԳԻ ԴՅ)ԼՈՂՈՂՈՍԼԻ  
ԼՈՒՂՈՂՈՂՈՂՈՅ ԲԱՂԻՇԵՑՈՅ), ՈՐ ԵՂԵՒ ԷՈԳԱԲԱՐ/ՁՈՒ ԵՒ ՊԱՏՃԼԱՅԵՆ ԾԻ-  
ՆՈՒԹԵԱՆ՝ ԲԱՋՄԱԴԻՄԻ ԱՇԽԱՏՈՒԹԵԱՄԲՎԼԱՅՈՂՈՂՈՅ ԻՐՈՅ /ԷՈԳՈՅ ԵՒ ՆԱԽ-  
ՆԵԱՑՆ: ԵՒ ԵՂԵՒ ՆԵՐԹՎՈՋ ՓՐԿՁԻՆ ՄԵՐՈՅ 1751, ԻՍԿ ԸՍԼՏ՝ ԷԱՅՈՅ ՌՄ:/ ՈՎ  
ԲԼԱՅՐԵԵՊԼԱՅԵՏԼՈՂՔ, Ի ՅԸՆԹԵՌՆՈՒԼ ՁԼԱՅՐՁԼԱՅԵԼԱՅԵԼԻՅՈՒ ՅԻՇԵՑԷՔ ՄԻՈՎ  
ԷԱՅՐ ՄԵՐԻԻ/ ՎԵՐՈՅԳՐԵՑԵԱԼ ԲԼԱՅՐԵԵՊԼԱՅԵՏԼՈՂՔԸ, ԵՒ ԱՅՑԵԼՈՒ ՍԼՐԻՈՅ  
ՏԱՆՍ ՅԱԴԱՄԱ ԵԻԵԹ ԱԲԵՂԱՅԼՍԵՆ:

*Հրատ. Բժշկյան, 325-առանց վերջին երկու տողի, Տեր-Արրահամյան, Բ, 153-154 առանց վեր-  
ջին երկու տողի, Սահփանե, 5-6, Кучук-Иоаннесов, 41,  
Якобсон, 181, Григорян, Новые данные, 298.*

Լուսանկ. 90

209. Գալթի արևմտյան մուտքի ձախ պատին, վերուստ 7 տող.

ԵՍ ՍԻՄԷՆՆ / ՍԱՐԿԱԻԱԳ/ ԵԿԻ ԵՐԿՐՊ/ԱԳՈՒԹԻԼԻՅ ԱՐԻ ՄԲ ԽԱԶԻՆ ԹՎ.ՋՂԵ  
(1546) ԻԼՈՎՑԻ:

210. Նախորդից փոքր-ինչ ներքև՝ եղծված 7 տող.

ՄԲ ՆՇԱՆՍ ԲԱՐԵԽ/ԱԻՍ Է ՍԱՏԻՐԼԻՆ՝ ԵՒ ԳՐԻԳՈՐ Վ... ԾԼՆՈՂՈՅ ՆՈՐԻՆ/. ՋԷՋ  
(1527):

211. Նախորդի տակ, մանրատառ շղագրով մեկ տող.

ԹՎ.ՌԼԱ. (1582). ՅԼԻՇԼԱՏԱՅԵ Է ԱԻԱԳ ՊԼԱՅՐԼՈՆԻՆ:

212. Գալթի Հյուսիսային կամարայան տրևոտյան կողմին քանդակված խաչերից  
ներքև՝ եղծված 4 տող.

ՍԲ ՆՇԱՆՍ ՍԻՐՍԵ ԼԻՑԻՆ ՄԵՋ ԱՊԱԻԷՆ ԿԱՆԳՆԵԱԼ ՅԵՐԿՐԻ/ Է ԲԱՐԵԽԱԻՍ... ԿՈՒ-  
ՍԻ, ՓՈԽԵՑԵԼՈՅ ՏՂԱՅ ԷԱՍԱԿԻ:/ ՏԱՊԱՆՔՍ... ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱԻԱԶԱՆՍ ԱՐԺԱՆԻ...  
ՈՒՄՆ ԵՒ... ՆՈՑԻՆ ԱՐԻ ՇԱՌԱԻՒՂԻ:

Ծանոթ. Ցավոք, անձնանուններն են եղծված: Բնագրի տակ, հավանաբար, փորագրիչի  
ստորագրությունն է:

213. Գալթի արևմտյան մուտքի Հյուսիսային կողմին, նախորդ արձանագրության  
մոտ՝ 5 տող.

ԵՒ ԵՍ ԽԱՍՊԷԿ ԾԼԱՅԵԼԱՅԵ/ ԽԱԶԻՆ,

ԵՐԿԻՐՊԱԳԻ/ՄԲ ՆՇԱՆԻՆ.

Ի ԹԻԼԻՍ] ՀԱՅՈՑ ՄԵԾ ՏՈՒ/ՄԱՐԻՆ.

ՈՐ ԷՐ ՀԱ/ՋԱՐ ԼԻՆԴՆՍՈՒՆ ԵՒ ՄԻՆ (1642):

Մանոթ. Հիշատակվածը իմաստակերեցն է՝ նշանավոր տաղասաց և մատենագիր իմաչատուր Կաֆայեցին: Ենթադրության հիմք է ծառայում ընդդրի նաև ընդհանրապես կաղապարը:


214. Խաչքար, կրաքարից, վեց փոքրիկ խաչերով: Աղուցված է գավթից դեպի եկեղեցի տանող միջանցիկ մուտքի հյուսիսային պատին: Խաչանշաններից վեր՝ 2 տող.

ՍԲ ԽԱՉՍ ԿԻՐԱԿՈՍԻՆ ԵՒ ՅԱԿՈԲԻՆ... ԳԷՈՐԳԻՆ ԵՒ:

215. Նախորդի տակ՝ 3 տող.

ՅԻՇԱՏԱԿ Է ՄԲ ՆՇԱԼՆԵԼԵՆ ՍԻՄԷՈՆ ԱԲԵՂԻ ԵՒ ԾՆՈՂԱՑՆ/ԿԻՐԱԿՈՍԻՆ... ԱԿ... Ի ԹՎ. ՊԾ (1401):

216. Գավթի հյուսիսային պատին, ներքուստ՝ արևմտյան մուտքի մոտ, տնհավասարաչափ շղաղիր տառերով 9 տող.



ԵՍ ԱՆԱՐՃԱՆ/ՂՍ ՔԷՖԵՑԻ,

ՈՐԴԻ/ԵՄ ԵՍ ՏՐ ՊԵՏՐ/ՈՍԻ,

ՈՐ ՏՐ ՅՈՎԱՆԷ/ՍԿՈՉԵՑԱՑ.

ՕԾՈՒՄՆ ԱՌԻ Ի ՄԷՋ ՄԲ ՆՇԱՆԻ/

ՉԵԹԱՄԲ ՅԱԿՈԲ/ՎԵՀԱՊԵՏԻ.

ԹՎԻՆ ՌՃԾ (1701)-Ի:

Մանոթ. Հիշատակված Յակոբ վեհապետը Թոպաիի (Տոպոլեկայի) Ս.Ուրբաթ եկեղեցու 1702 թ. արձանագրության մեջ կոչված է առաջնորդ, քաջ ընդունակ: Եղել է Ս.Խաչ վանքի նշանավոր վանահայրերից մեկը:

Հրատ. Բժշկյան, 324, Խ. Սահփանե, 10, Տեր-Աբրահամյան, Բ, 154, Кучук-Иоаннесов, 41,

Լուսանկ. 91

217. Խաչքար, աղուցված է եկեղեցու արևմտյան մուտքի հարավային միջնապատին: Խաչանշանից ստորե՝ 3 տող.

ԲԱՐԷԽԱԽՍ Է ՄԲ ՆՇԱՆՍ ՅԼՈՎԱՆԵՍ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ... ԹՎ. ՋԼԶ (1487)

218. Նախորդից դեպի աջ՝ որմնասյան վրա փորտղրված խաչանշանի տակ, 4 տող.

ԿԱՆԳՆԵՑԱ ՄԲԽԱ

ՉՍՓՐԿ ՉԻՔԱՏԻՄԵ ՄԵ

ՀՌԵՆԻՒՆՆԱՆՈՒՄ

+ ԴՁԵ

+ ԿԱՆԳՆԵՑԱ/Ի/ ՄԲ ԽԱ/ՉՍ  
ՓՐԿՉԻ ԲԱՐԷԽԱԻՍ Է/ ՀՌԵՆԻ  
ԻՇԽԱՆ ԴԵՆ ԿՈՂԱԿՐՑԻՆ Դ/ +  
ՊԾԵ /1406/:

Ծանոթ. Անճնանունը կարելի  
է վերծանել նաև Հունդիշա/ՀՀԻն:

219. Գավթի արևմտյան պատին, որմնասյան վրա՝ շղագրով մեկ տող.

ՄԲ ԽԱ.Չ:

220. Նույն տեղում՝ մասնա շղագրով.

Մանուկ. ԹՎ.ՌԾԵ (1606):

Ծանոթ. ԹՎԻՆ ըստը փորագրված է կցագրով: Թ և Վ տառերի միջին հորիզոնական ստեղ-  
ների միացմամբ ստացված է Ռ հազարավորը:

221. Եկեղեցու հարավայինն ավանդատան մուտքի ճակատին, մասնա շղագրով մեկ  
տող.

ԹՎ. ՌՃՁ (1731) ԻՆ ԵՍ ՊԵՏՐՈՍ ԵԿԻ ԾԼԱ.ՍԼԱ.ՅԵԼ ՄԲ ԽԱ.ՉԻՍ:

222. Սեղանատան արևմտյան որմնակամարին, ներքուստ, հատակից մոտ 2 մ  
ընդհանուր թշվառ՝ 3 տող.

ԳՐԻԳՈՐ ՎԱՐԴԱՊԵՏ Ի ԵՐԿՐԷՆ ՍՌՃԻ ՍԱՐԳԻՍԸՍ Գ(3) ՏԱՐԻ ՄԲ ԽԱ.Չ ԽԸՋՄԵԹ  
/ԱՐԻ ՎԼԱ.Ս/Ը ԿԵՆԱՑ ԻՄՈՑ. ԹՎԻՆ ՌԾԺԱ. (1762) /

ՅԻՍ-ՀՈԿՏԵՄԲԵՐԻ...

Ծանոթ. Երկրէն ըստը փորագրված է եկեղեցու: Եթէ Առճի տեղանունը չհաջորդեք, կարելի էր  
վերծանել նաև եգյան-քեռորդի նշանակությամբ, այսինքն՝ Գրիգոր վարդապետի եգյան:

Հրատ. Բժշկյան 326. Տեր-Աբրահամյան, Բ, 155, Խ. Ասեփանե 10,  
Кучук-Иоаннесов, 41 Якобсон, 174.

Արձանագրություններ, որոնք այժմ տեղում չկան

223. Հարավային մուտքի գոտի վրա.

Յիշատուկ է դուռու Մահտեսի Սարգսին: ՌՎ. ՌՃԼԵ (1686):

Հրատ. Բժշկյան 23, Տեր-Աբրահամյան, Բ, 152, Խ. Ասեփանե, 8,  
Кучук-Иоаннесов, Древности Вост. II. 72.

224. Խաչքար, ագուցված է եղել կենտրոնական՝ արևմտյան մուտքի ձախ պատին, ներքուստ.

Յիշատակ է Յովհաննէսի, որ ի ծովուն ըկղմեցաւ:

Հրատ: Բժշկյան 324. Տեր- Արրահամյան, Բ. 154. Խ.Սահփանե 10  
Кучук-Иоаннесов, 41

Խաչքարեր, որոնք ագուցված են եղել գավթի պատերին.

Յիշատակ է սր խաչս Պալային, ԹՎ. Ռ. (1551):

Հրատ. Բժշկյան 325. Խ. Սահփանե 26:

226.

Մը նշանքս բարեխաւս են Մէհրի շային. ԹՎ. Ռ.Լ.Զ (1587):]

Հրատ. Բժշկյան, 325:

227.

Տէր Յիսուս Քրիստոս Աստուած:

Հրատ. Խ.Սահփանե, 26

228.

Մը նշանքս բարեխաւս է Պուլղանին եւ Կոռնէլի... Ռ.ՂԸ /1649/:

Ծանոթ. Խ.Սահփանե թվականը դրել է Ռ.ՂԿ, որը սխալ է, քանի որ չէր կարելի ընթերցել Հաղար իննսուն քառասուն: Պեաք է կարգալ Ռ.ՂԸ՝ 1098+551=1649:

Հրատ. Խ. Սահփանե, 26:

229. Սեղանաաւան ամալտնի մարմարե հուշաախաակին.

Նորոգութեամբ Ս.Խաչ վանքին

Ենթ. Մանուէլ վարդապետին

Այս բարերուդիս աղբիւր ներսին

Մարիամ գերազնուհին՝

Կենակից Աղւստանովին,

Եւ յիշատակ յիշել զհոգին

Վանցույ կնոջ Մարիամին.

Կշռածի եմ թւով Փրկչին

Եւ սեպտեմբեր ամսոյ քսանին: 1836:

Ծանոթ. նախավերջին առգում գումարագիր ծածկագիր է (ԿՇՌՍԾԻ ԵՄ կապակցութունը), որը վերածնվում է հետևյալ կերպ.

$Կ(60)+Շ(500)+Ռ(1000)+Ա(1)+Ծ(50)+Ի(20)+Ե(5)+Մ(200)=1836:$

Ինչպես տեսնում ենք, արձանագրութունն ունի կրկնակի թվագրութուն: Վերծանութունը մեր խզրանքով կաարել է պատմ. գիտ. գովտ. Ռ.Ն. Վարզանյանը:

Հրատ. Ստեփանե, 9:

230. Խաչքար, նախապես ագուցված է եղել գավթի տղտկողմյան պատին, եկեղեցու մատքի մոտ.

Թվ: ԶԿ (1511). Բարեխաւս է սր նշանքս ճերմակ Խաչիկ Պապաքին եւ ծնւոյ զլայց - Եազլայլիւն, Փաշլայլիւն թլուսին) եւ դաւակայց:

Ծանոթ. Մ. Բժշկյանն այս արձանագրութիւնը անսել է Հրեշապակապեաց եկեղեցու ներսում:

Հրատ. Բժշկյան, 350 Кучук-Иоаннѳсов, 41,

Ստեփանե, 11:

231. Տաճարի գավթի վերնատանը, Հազորգության պատկերի տակ.

Պատկերս ի յիշատակ մահտեսի Անանի. թլվին] 1843:

Ծանոթ. Խ. Ստեփանեի կարծիքով այս նկարն ավելի վաղ ժամանակի գործ է:

Հրատ. Ստեփանե, 18:

232. Գավթի Հարավային պատին ագուցված սալատախտակին.

Ճանուղարհ վանիցս ս. Խաչիս վերանորոգեալ Հարթեցաւ օգնութեամբ ս. Խաչի ի 1889 ամի չանդը վանահօրն Խորէն ծայրագոյն վարդապետի Ստեփանէի. նպասաւը արկնոջ Մ. Եառուրի եւ ոմանց Հայոց:

Հրատ. Ստեփանե, 26:

233. Գտվթի Հյուսիսային պատի ագուցված մարմարե հուշատախտակին.

Երնութիւնք վանիցս ս. Խաչի վերանորոգեցան եւ նորոգ գանգալատուն շինեցաւ ի 1890 ամի, օգնութեամբ ս. Խաչիս, չանդը վանահօրն՝ Խորէն ծայրագոյն] վարդապետի Ստեփանէի, արդեամբք վանիցս, նպասաւը Պեարոսի Թօփալեան եւ ոմանց Հայոց ի Սիմֆերօպօլէ, եւ զկահարապիս նուիրեցին եւ հոգացին ամուսինք Ղազարոս եւ Մարիամ Բերրեբեան ի Թէոփոսիոյ:

Ծանոթ. Ղազարոս Բերրեբեանը Հովհաննէս Սյվազովսկու եւ Հակոբ Սերրերեակյանցի հետ միասին նպաստել են նաև Թեոփոսիայի Ս. Սարգիս եկեղեցու 1892 թ. նորոգմանը (տե՛ս արձ. N. 135):

Հրատ. Ստեփանե, 28:

### Արձանագրություններ, որոնք եղել են եկեղեցական սպասքի վրա

234. Բուրվառի ներքևում, շրջանաձև՝

Յիշատակ է բուրվառս ի. ծ. Եաչինի գստերն Եահալիքային հոգոյն, ի դուռն ս. Յովհաննու: ՌձԽ (1691):

Ծանոթ. Խ. ծ. տառաշարքը կարելի է վերծանել խոճա կամ իոնարհ ծառա:

Հրատ. Ստեփանե, 15:

235. Արծաթե խաչի վրա՝

Յիշատակ է սուրբ նշանս Լուսապարոնի և Թորոսին հոգևոյն. ծնողացն՝ պարոն Ծահի-  
նին և Խանըմին և եղրարցն և քվերցն և ամենայն զարմիցն. ի դուռն ս. Ա./ստուռա/ծած-  
նի: Թվին Քրիստոսի ՌՃԼ-ին (1681):

Հրատ. Ստեփանե, 15:

236. Խաչի վրա՝

Յիշատակ է սուրբ խաչս Խանդաւային. ի դուռն սուրբ Ա.ստուռածածնին. Թվին ՌՃԶԶ  
(1737):

Հրատ. Ստեփանե, 15:

237. Մեկ այլ խաչի վրա՝

Յիշատակ է սուրբ խաչս Ղրիմու և Նոր բերդի ամամ վաճառականացն ի դուռն սուրբ  
Յակոբ Մծրնա Հլայրալկելային. Թվին ՌՃԾԹ (1710):

Ծանոթ. Աճամ կոչվում էին պարսկահայերը:

Հրատ. Ստեփանե, 15:

238. Մասնապահարանի խաչի վրա՝

Յիշատակ է սուրբ խաչս ի Կոստանդնուպոլսոյ սուրբ Աստուռածածնի եկեղեցւոյ շնոր-  
հալի դպրաց, որք եսուն Ղրիմու սուրբ Խաչ վանքին վասն պահպանութեան իւրեանց  
դուռվ պահարան ըստմամբ սրբոց նշխարաց ներ եղին պահարանոցս, որ եղև յոր-  
դորմամբ Աղամայ վարդապետի՝ սրբոյ ուխտիս առաջնորդին: Ի թվոյ մերոյ կեն-  
ոստելն ՌԵԼՃԽԴ, իսկ ըստ Հայոց ՌՄԳ (1754):

Հրատ. Ստեփանե, 16:

239. Գրակալի վրա ամրացված խաչի չորս ակուններում՝

ՏՐ ԱԾ ՅԱ ՔԱ: Իշատակ է սուրբ խաչս Գարրիէլի դատեր Կրկարքէյն. ի դուռն սուրբ  
Խաչ վանքին. Ամին 1805:

Հրատ. Ստեփանե, 16:

240. Խաչվառի վրա՝

Յիշատակ է սուրբ Յակոբի մասունքս Կիրակոս վարդապետին. ՌՄԻԱ (1772):

Հրատ Ստեփանե, 17:

241. Ավեսարանի տիտղոսաթերթին.

Բարեխօս է սուրբ նշանս և սուրբ Օնտարանս Լուսալիքէին առն մահտԼեալի Քլրիս-  
տոյսառուրին, ծնողացն՝ մահտԼեալի Թօխթամիշին և Ուլուլիքէին, որդոցն Պա-  
րոն[ին]. ի դուռն սուրբ Քառասնից. ի Թվին ՌՃ (1651):

Ծանոթ. Սվետարան ցառում նկատելի է աւ երկհնչյունի՝ Օ-ի վերածվելու երեւոյթը, որպի-  
սին անհարկի կիրառություն է:

Հրատ. Ստեփանե, 16:

242. Արծաթյա քշոցի վրա՝

Յիշատակ է քոցս Ալմաս իրեցենոջ և իւր առն աէր Լուսիկին և ծնաւդացն մահդասի Աստուածաւորին և Ալթնպրքային. ի դուռն Պէշտէկիւրմանու սուրբ Աստուածածնի. թվին ՌՃԼԸ (1689):

Հրատ. Սահփանե, 17:

243. Մասնապահարանի խաչի վրա՝

Յիշատակ է սուրբ խաչս մ[ա]յ[Ն]Լ[տե]ս ի Սիմոն, մ[ա]յ[Ն]Լ[տե]ս ի Մինասին, մ[ա]յ[Ն]Լ[տե]ս ի Մէկէնտին, Պետրոսին, թվին ՌՄԼԲ (1783):

Հրատ. Սահփանե, 17:

244. Առանց կոթառի խաչի վրա՝

Յիշատակ է սուրբ նշանս Կիրակոս վարդապետին.]:

Հրատ. Սահփանե, 17:

Ղրիմի Ա.Խաչ վանքից 3 կմ հեռավորութեամբ, անառապա լեռան լանջին, 1356 թ. կառուցվել է ես մեկ առճար՝ Ս.Սահփանոս անունով: Մ. Բժշկյանի շրջադաշտային օրոք այն եղել է քանդված: Ուսումնասիրողը նկատել է եկեղեցու, խորանի, չորս կամարների և սլաբիսպների հետքերը: Տաճարի մեջ եղել է ջրհոր, որի կառուցման առթիվ կանգնեցված խաչքարն ունեցել է հիշատակադրություն: Պարսպապատների ներսում գիտվել են յոթ սենյակների հիմնաքարերը<sup>54</sup>: Սուրբ Խաչի վանահայր իտրեն Սահփանեի առաջնորդության տարիներին այդ աղբյուրը դեռևս ըխել է<sup>55</sup>:

## ԲԵԼՈԳՈՐՄԿԻ ԾՐՋԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՎԻՄԱԳՐԵՐԸ

### ԲԵԼՈԳՈՐՄԿ ՔԱՂԱՔ

#### /ՆԱԽԿԻՆ՝ ՂԱՐԱՍՈՒ, ՂԱՐԱՍՈՒԲՍՋԱՐ/

Բելոգորսկը գտնվում է Սիմֆերոպոլ-Թեոդոսիա մայրուղու վրա: Քաղաքը շրջապատված է կանաչավեա լեռներով, որոնց հարավային լանջերից ըխում է Ղարասու (Սե ջուր) դեպը ե, անցնելով քաղաքի ասրածքով, թափվում Սիվաշի ծովածոցը:

Սնեցի Հայերի գանգավածային գաղթի ժամանակ՝ 1330 թ. Ղարասուի մերձակայքում հիմնադրվում են նորանոր բնակավայրեր ե կրթամշակութային օջախներ: Հայարնակ Խարախաչ (Սե խաչ) թաղամասում հեաադայում բնակություն են հասաաում րացսոապես պարսկահայերը: 1779 թ. ադրիլի 21-ից հեո, երը Ղրիմը վերջնականապես անցնում է ոուսական կայսրությանը, Ղարասուըաղարում տեղի են ունենում քաղաքական ե սոցիալ-մշակութային մի շարք փոփոխություններ: Սյս քաղաքը, ինչպես նաե Հին Ղրիմը, ձեռք էին բերել ներքին ինքնավարու-

54 Մ.Բժշկյան, Ժամապարհորդութիւն, էջ 328:

55 Խորեմ Ստեփանե, էջ 33